Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1104²-09.06.2025-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 83-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«6 Վարչական դատարանն անշարժ գույքի վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրի կայացրած վարչական ակտի կատարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնելու, ինչպես նաեւ այդ որոշումը փոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումներն անշարժ գույքի պետական ռեգիստր ուղարկում է էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 92-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«2. Անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին որոշումն անշարժ գույքի պետական ռեգիստր ուղարկելու դեպքում, դատարանն այն անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկում էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 93-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«7. Դատարանն անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովման միջոցը փոփոխելու, իսկ հայցի ապահովումը մերժելու կամ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումը սույն օրենսգրքով սահմանված կարգով վերաքննիչ դատարան բողոքարկված չլինելու պարագայում էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով ուղարկում է անշարժ գույքի պետական ռեգիստր, եթե տվյալ հայցի ապահովման միջոցը կիրառելու մասին որոշումը դատարանն անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկել առանց կատարողական թերթը հարկադիր կատարման ուղարկելու: Այն դեպքում, երբ անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովումը մերժելու կամ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ վերացնելու մասին որոշումը սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել է վերաքննիչ դատարան, ապա այն դատարանի կողմից էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկվում վերաքննիչ դատարանի կողմից սույն օրենսգրքով սահմանված կարգով կայացրած որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Կառավարությունն ընդունում է սույն օրենքն ընդունվելուց հետո չորս ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1104²-09.06.2025-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 83-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«6 Վարչական դատարանն անշարժ գույքի վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրի կայացրած վարչական ակտի կատարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնելու, ինչպես նաեւ այդ որոշումը փոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումներն անշարժ գույքի պետական ռեգիստր ուղարկում է էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի ~~91~~92-րդ հոդվածը լրացնել նոր ~~6~~2-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«~~6~~2. Անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովման միջոցներ կիրառելու ~~դեպքում դատարանն առանց կատարողական թերթը հարկադիր կատարման ուղարկելու, հայցի ապահովման միջոց կիրառելու~~ մասին

որոշումն անշարժ գույքի պետական ռեգիստր ուղարկելու դեպքում, դատարանն այն անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկում էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով: ~~Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը~~»:

Հոդված 3. Օրենսգրքի 93-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«7. Դատարանն անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովման միջոցը փոփոխելու, իսկ հայցի ապահովումը մերժելու կամ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումը սույն օրենսգրքով սահմանված կարգով վերաքննիչ դատարան բողոքարկված չլինելու պարագայում էլեկտրոնային ~~եղանակովուղարկում~~եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով ուղարկում է անշարժ գույքի պետական ռեգիստր, եթե տվյալ հայցի ապահովման միջոցը կիրառելու մասին որոշումը դատարանն անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկել առանց կատարողական թերթը հարկադիր կատարման ուղարկելու: Այն դեպքում, երբ անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովումը մերժելու կամ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ վերացնելու մասին որոշումը սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել է վերաքննիչ դատարան, ապա այն դատարանի կողմից էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկվում վերաքննիչ դատարանի կողմից սույն օրենսգրքով սահմանված կարգով կայացրած որոշումն ուժի մեջ մտնելուց հետո~~: Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը~~:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Կառավարությունն ընդունում է սույն օրենքն ընդունվելուց հետո չորս ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1104-09.06.2025-ՊԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11041-09.06.2025-ՊԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11042-09.06.2025-ՊԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11043-09.06.2025-ՊԻ-011/0) ԵՎ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11044-09.06.2025-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1104-09.06.2025-ՊԻ-011/0)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 3-րդ հոդվածից ակնհայտ է դառնում, որ սահմանափակում կիրառող իրավասու մարմինների շարքին են պատկանում նաև դատարանները, ուստի բավարար հստակություն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «պետական մարմիններ» բառերից հետո լրացնել «և դատարաններ» տառը և բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանափակում կիրառող իրավասու մարմինների կողմից անշարժ գույքի պետական ռեգիստր պետք է ներկայացվեն նաև սահմանափակումների դադարման պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը, առաջարկում ենք՝ Նախագծի 2-րդ հոդվածում «մասում» բառից հետո լրացնել ««փաստաթղթերը,» բառից հետո լրացնել «դադարման պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը,» բառերը, իսկ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել « նորմատիվ » բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաեւ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11041-09.06.2025-ՊԻ-011/0)					
1.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը, ինչպես նաև խմբագրական աշխատանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածից հանել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:» նախադասությունը, իսկ «էլեկտրոնային եղանակով» բառերից հետո լրացնել «՝ Կառավարության սահմանած կարգով» բառերը:		
2.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաեւ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11042-09.06.2025-ՊԻ-011/0),					
1.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Բավարար հստակություն ապահովելու նպատակով, ինչպես նաև՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի իրավակարգավորումները վերաբերում են հայցի ապահովման կիրառման հիմքերին, իսկ նախագծով առաջարկվող լրացումները վերաբերում են դատարանի կողմից արդեն իսկ կայացված հայցի ապահովման միջոցների կատարման կարգին՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոդվածով նախատեսվող լրացումն իրականացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասում հետևյալ ձևակերպմամբ. «2. Անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին որոշումն անշարժ գույքի պետական ռեգիստր ուղարկելու դեպքում, դատարանն այն անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկում էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով:»:		
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը, ինչպես նաև խմբագրական աշխատանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներից հանել «Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:» նախադասությունը, իսկ «էլեկտրոնային եղանակով» բառերից հետո լրացնել «՝ Կառավարության սահմանած կարգով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաեւ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11043-09.06.2025-ՊԻ-011/0)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործող կարգավորումների համատեքստում, առաջարկվող իրավանորմերի իրավական հստակությունն ու միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք դրանք խմբագրել, մասնավորապես՝ Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Դատարանն անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների կամ այդ իրավունքների նկատմամբ գրավի իրավունքի արգելադրման առկայության դեպքում տվյալ վարույթով կայացրած և օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտը, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքն արգելանքից հանելու մասին որոշումը սույն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենսգրքով սահմանված կարգով վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոքարկված չլինելու պարագայում, իսկ բողոքարկված լինելու պարագայում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի կողմից սույն օրենսգրքով սահմանված կարգով կայացրած որոշումն օրինական ուժի մեջ մտած լինելու դեպքում անշարժ գույքի պետական ռեգիստր ուղարկում է էլեկտրոնային եղանակով: Այն դեպքում, երբ արգելադրումը պահպանվում է մինչև դատական ակտի կատարումը, դատարանը տվյալ վարույթով կայացրած և օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտնանշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկվում դատական ակտը կատարվելուց հետո: Եթե անշարժ գույքն արգելանքից հանելու մասին որոշումը կայացվել է դատական նիստի արձանագրության մեջ մտցնելով, դատարանը դատական նիստի արձանագրության համապատասխան քաղվածքն անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկում էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:		

2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը և բավարար հստակություն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներում բոլոր տեղերում «էլեկտրոնային եղանակով» բառերից հետո լրացնել «՝ Կառավարության սահմանած կարգով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 3-րդ, հոդված	Հիմք ընդունելով Նախագծի 1-ին հոդվածի նոր խմբագրությամբ շարադրված բովանդակությունը՝ խմբագրական աշխատանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածում բոլոր տեղերում ևս «վերաքննիչ» բառից հետո լրացնել «կամ վճռաբեկ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 3-րդ, հոդված	Իրավական հստակություն և իրավակիրառ պրակտիկայի միատեսակություն ապահովելու, ինչպես նաև հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի առաջին նախադասությունում «վերացնելու մասին որոշումը» բառերից հետո լրացնել «, իսկ բանավոր ընթացակարգով միջնորդության քննության դեպքում որոշման վերաբերյալ դատական նիստի արձանագրության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			քաղվածքը,» բառերը, իսկ նույն հոդվածի երկրորդ նախադասությունում «ապա» բառից հետո «այն» բառը փոխարինել «որոշումը, իսկ բանավոր ընթացակարգով միջնորդության քննության դեպքում որոշման վերաբերյալ դատական նիստի արձանագրության քաղվածքը,» բառերով:		
5.	Կառավարություն	Նախագծի 4-րդ, հոդված	Հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածում բոլոր տեղերում «որոշումը» բառից հետո լրացնել «, իսկ բանավոր ընթացակարգով միջնորդության քննության դեպքում՝ որոշման վերաբերյալ դատական նիստի արձանագրության քաղվածքը,» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Կառավարություն	Նախագծի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներից հանել «Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:» նախադասությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաեւ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:		
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-11044-09.06.2025-ՊԻ-011/0)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Խմբագրական աշխատանքներով պայմանավորված, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Սնանկության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում նշված է. «Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն)»՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «Կառավարությունը» ձեւակերպումը փոխարինել «կառավարությունը» ձեւակերպմամբ, իսկ «նախադասությունը» ձեւակերպումը «նախադասությունները» ձեւակերպմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Սնանկության մասին» օրենքի 15.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «գործադրմամբ» բառից հետո կիրառվում է այլ կետադրական նշան՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում «գործադրմամբ:» ձեւակերպումն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			փոխարինել «գործադրմամբ.» ձեւակերպմամբ:		
3.	Կառավարություն	Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը և բավարար հստակություն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ հոդվածներում «էլեկտրոնային եղանակով» բառերից հետո լրացնել «՝ կառավարության սահմանած կարգով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ հոդվածներից հանել «Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:» նախադասությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել « նորմատիվ » բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաեւ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է: